ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ և
ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ
ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ

## Ուղղակի դիտարկում

**Նպատակ**

Ուղղակի դիտարկումն իրականցվում է ՎԽԿԲ թիմի անդամների (հնարավորինս դպրոցականների մասնակցությամբ), մարզային փրկարար ծառայության և աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմի ներկայացուցիչների կողմից, նպատակ ունենալով գրանցել այն ամենը, ինչը կարող է պարունակել վտանգ, ինչպես նաև նպաստել աղետների ռիսկի նվազեցմանը, մեղմմանը ու կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ուղղված գործողությունների իրականացմանը: Գրանցվում են համայնքից, ՎԽԿԲ գործընթացի համար անհրաժեշտ, առաջնային տպավորությունները, այդ թվում՝ շենք-շինություններից, ենթակառուցվածքներից, սոցիալ-տնտեսական և կենսական կարևոր համակարգերից, հողային և ջրային ռեսուրսներից, մարդու առողջությանը վերաբերող հարցերից, գյուղատնտեսությունից և այլն: Հաճախ համայնքի բնակիչը կարող է ուշադրություն չդարձնել առկա վտանգավոր առարկաների կամ երևույթների վրա, քանի որ դրանք իրեն շրջապատող ամենօրյա առարկաներն ու երևույթներն են: Այդ իսկ պատճառով խմբի կազմում անհրաժեշտ է ներգրավել մարզային փրկարար ծառայության և աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմի ներկայացուցիչների: Դիտարկումը կարող է իրականացվել ՎԽԿԲ ողջ գործընթացի ժամանակ:

Նախքան դիտարկումը ձեռնարկելը, կարևոր է զինվել երկրորդային աղբյուրներից ատացված տեղեկատվությամբ, նախապես ձևավորելով կլիմայի տեսանկյունից հետաքրքրություն առաջացնող տարրերի շրջանակը, ինչը թույլ կտա ավելի թիրախային դիտարկում իրականացնել: Առանձին ուշադրության պետք է արժանացնել վտանգավոր գոտիներում կլիմայի փոփոխությունից բխող խնդիրների վրա՝ դեգրադացված/էռոզացված հողեր, վնասված շրջակա միջավայր, սողանքներ, սելավատարեր և այլն: Կարևոր է նաև հաշվի առնել կլիմայական վտանգների հետևանքով ոլորտային կառույցներում և ծառայություններում առաջացող խնդիրները: Դիտարկման ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը կարող է լրացնել այն բոլոր բացերը, որոնք տվյալների հավաքագրման այլ գործիքներով հնարավոր չէ ստանալ: Սակայն, հաշվի առնելով այն փաստը, որ գործիքն ինքնին սուբյեկտիվ բնույթ է կրում, անհրաժեշտ է այս գործիքի միջոցով ստացված տվյալների իսկությունը ճշտել այլ գործիքներով ստացված տեղեկատվության հետ համադրելով, համայնքի ղեկավարության և բնակչության /հատկապես տարեցների/ հետ շփվելիս, կամ հարցազրույցների ընթացքում:

**Ակնկավող արդյունքներ**

Դիտարկումը կատարելիս ՎԽԿԲ թիմը, մարզային փրկարար ծառայության և աղետների ռիսկի նվազեցման մարզային թիմի ներկայացուցիչները տիրապետում են այնպիսի տեղեկատվության, որը և ոչ մի պաշտոնական աղբյուրում չկա: Այդ տեղեկատվությունը կարող է վերաբերվել առարկաների, մարդկանց, երևույթների, հարաբերությունների և այլն: Հավաքված տվյալները սովորաբար լինում են բազմաբնույթ, քանի որ պարունակում են տեղեկատվություն համայնքի ֆիզիկական տվյալների և կենսագործունեության վերաբերյալ: Կարող են լինել նաև հատուկ նշանակության օբյեկտների սեյսմակայունության գնահատման վերաբերյալ նկատառումներ:

Հավաքագրված տվյալները  կարևոր են հետագա վերլուծության և աղետների ռիսկի նվազեցմանն ու կլիմայի փոփոխության հարմարվողականությանը ուղղված ծրագրերի մշակման համար: Տվյալները գրանցման համար առաջարկվում է ստորև բերված ձևաչափը:

ՏԵՂԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ և
ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ
ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ

**Ուղղակի դիտարկում**

| Առարկաներ, երևույթներ, մարդիկ, հարաբերություններ | Նկարագիր |
|---|---|
| Բնակավայրեր/Ենթակառուցվածքներ | |
| | |
| Կենսական կարևոր համակարգեր | |
| | |
| Ռիսկային տարածքներ – հանգստի, ժամանցի, հանրային հավաքի վայրեր | |
| | |
| Սոցիալտնտեսական | |
| | |
| Մարդու առողջություն | |
| | |
| Գյուղատնտեսություն | |
| | |
| Ջրային ռեսուրսներ | |
| | |
| Զբոսաշրջություն | |
| | |
| Էներգետիկա | |
| | |
| Վտանգ | |